

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԻԼՅԱ ԱՐՈՒԼԱԶԵԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Մենդյան 80-ամյակի առթիվ)

ՎՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. ՉԻՔՈՒՄՎԱ (Թբիլիսի)

1. Իլյա Աբուլաձեն իմ կրտսեր գործընկերն էր. մեր միջև ընդամենը կրեք տարվա տարբերություն կար: Սակայն լեզվի և գրականության բաժնից հետո նա շարունակեց ուսումնառությունը նաև լեզվաբանության բնագավառում և այնպես պատահեց, որ ընդհանուր լեզվաբանության սեմինարում հանդիպեցինք միմյանց. ես՝ երիտասարդ դասախոս և նա՝ ուսանող ու սեմինարի միակ մասնակիցը: Հիշում եմ ինչպես էինք մշակում Հերման Պաուլի հայտնի դասընթացի («Լեզվի պատմության սկզբունքները») ներածությունը, այսպես կոչված՝ «սկզբունքների ուսմունքը» (Prinzipienlehre): Հ. Պաուլի դասընթացն այժմ թարգմանված է ռուսերեն (1960 թ.), իսկ այն ժամանակ մեր ձեռքին գերմաներեն բնագիրն էր և ա՛յն էինք մշակում. նախ թարգմանում էինք և ապա ձգտում հեղինակային իմաստի համարժեք ընկալում և մեկնաբանություն գտնել: Պաուլի տեսությունը բովանդակությամբ բարդ է (հոգեբանականության ինքնատիպ տարբերակ է ներկայացնում, բավականաչափ վիճարկելի, իր ժամանակին Վ. Վոնդտի հուսկու քննադատությանն արժանացավ): Բարդ բովանդակությանը միանում է ծանրաճ լեզուն: Յուրաքանչյուր պարամունքին մեկ պարբերություն հաղիվ էինք հաղթահարում*: Հոգեբանության ու փիլիսոփայության մարզում այն ժամանակ ուսանողի ընդհանուր ահհրաժեշտ պատրաստությունը թերևս պակասավոր էր, սակայն Պաուլի մտքի համապատասխան ընկալում-գնահատումը ապահովված էր: Եվ այս վայել էր Իլյա Աբուլաձեի աշխատանքի ձևին ու բնույթին. անշտապ աշխատել գիտեր և հիմնավոր դատողության սովորություն ուներ:

2. Հայտնի է Իլյա Աբուլաձեի կազմած հնագրական ալբոմը («Վրաց գրչության նմուշներ», 356 էջ), որ մեր համալսարանը հրատարակեց 1949 թ.: Այստեղ «Մրգլովանի» (բուրգիժ երկաթագիր), «Կուլիսուրի» (ուղղագիր) և անցման «միսեդրուլի» (այսպես կոչված «գինվորական գրչության») նմուշներին առկցված է հապավումների բացման ընդարձակ ցանկ (էջ 330—356):

Այն ժամանակ Իլյա Աբուլաձեն պրոֆեսոր էր: Շատ ավելի վաղ (1927—28 թթ.) ուսանող Աբուլաձեն իմ խնդրանքով մշակեց «Վրաց հնագրության դասուսույց» (երկու պրակի ծավալով), որը համալսարանը հրատարակեց խմորատիպ եղանակով: 1924 թ. վրաց լեզվի ամբիոնի հանձնարարությամբ վրաց հնագրության գործնական պարապմունքներ էի անցկացնում, պարզ որ ասենք՝ ուսանողներին «ասումթավրուլի» և «նուսխուրի» գրչություն և զրչագրեր ընթերցել էի սովորեցնում: Գրերի բնորոշ օրինակներն ինքս էի տալիս: Ապա իմ խնդրանքով պատրաստվեցին այս «սյրակները», ձեռագրերը (X—

* Սույն սեմինարն այն ժամանակ վերջին անգամ անցկացվեց. հետո (1930 թվականից) համալսարանը ինստիտուտների բաժանվեց, և բրիգադային-լաբորատորային մեթոդը այս սեմինարն էլ վերացրեց, «ընդհանուր լեզվաբանության» ուսումնասիրությունն էլ:

XII դր.) Աբուլաձեի հետ ընտրեցինք, նա պատճենահանեց ու խմորատիպ հրատարակեց: Ծիշտն ասած՝ Իլյա Աբուլաձեն առանց պատճենման էլ կարող էր տալ ձեռագրական տառերի տարբերակումները: Նրա ձեռագիրը մեքենայրելու կարիք չուներ. այն ուղածղ մեքենագրությունից ավելի հստակ էր (այս առումով միայն հունական. հնագրության հանրահայտ մասնագետ Գրիգոր Ծերեթելու ձեռքով գրված ռուսերեն, լատիներեն կամ հունարեն տեքստը կարող էր համեմատության առնվել Իլյա Աբուլաձեի գրածի հետ): Սա ամենևին աննշան տեխնիկական ինքնատիպություն չէ. դրանում երևում է մարդը, նրա խառնվածքը, թերևս նաև՝ այն բանասերի մասնագիտությունը, որը միշտ գրչագրերի հետ է շփվում (ի դեպ՝ անկախ երկաթագիր կամ բոլորգիր լինելուց, միջնադարյան ընդօրինակողը ձեռագիրը չէր փոխում, ձեռագրի փոփոխությունը գրչի փոփոխություն է նշանակում): Ձեռագրի նման ինքնատիպությունը, հարկավ, ընդօրինակելի է՝ միայն եթե ընդօրինակելը հեշտ լիներ:



3. 1939 թ., եթե չեմ սխալվում, Իլյա Աբուլաձեն համալսարանում թեկնածուական դիսերտացիա պաշտպանեց (մենագրությունը նվիրված էր Շուշանիկի վկայաբանության վրացերեն և հայերեն բնագրերին): Դիսերտացիան հրատարակված էր, պաշտպանությունը՝ փայլուն, իսկ գնահատությունը՝ բարձր: Պաշտպանությունից հետո խորհուրդը խորհրդածույց էր պաշտպանության մասին (այժմյան կանոնադրությունը այսպիսի խորհրդածույցները կարգի խախտում է համարում). այլակարծություն չկար: Դիտխորհրդի անդամներից մեկը հարցրեց. «Ի՞նչ է պակասում այս դիսերտացիային, որպեսզի այն դոկտորական համարենք և համապատասխան միջնորդություն հարուցենք»... Դոկտորական դիսերտացիա Աբուլաձեն հետո պաշտպանեց:

4. Մի քանի տարի Իլյա Աբուլաձեն բանասիրական ֆակուլտետի ղեկանի էր: Երբ իմացա, որ ղեկան են նշանակել, դարմացած մտածեցի՝ ինչպե՞ս է հանձն առել. բարդ տառիներ էին (և՛ գրականագիտության, և՛ լեզվաբանության բնագավառում. որոշում կենսագրադի հանդեսների մասին, լեզվի նոր ուսմունքի հուժկու արշավ՝ մենատիրություն հաստատելու համար): Աբուլաձեն արժանավորապես դուրս եկավ այդ բարդություններից: Շնորհակալությունը եմ հիշում, թե ինչպես էր նա կարողանում նպաստավոր լինել որոշ «խոտելի» ձեռնարկների գործածությանը: «Ո՞ր է այս ձեռնարկին փոխարինող ռուսերենը»,— ասում էր նա: Առավել անսպասելին այն էր, որ համոզված իր իրավացիությանը՝ նա առանց քաշվելու հիմնարկի ղեկավարի մոտ շարադրում էր իր կարծիքը... և ղեկավարն էլ ըստ այդմ էր վարվում (նրա անաչառությունը և գործի հանդեպ ունեցած սերը հաշվի էր առնում):

1950 թ. լեզվաբանական բանավեճից հետո, օգոստոսին, բարձրագույն կրթության մինիստրությունը բարձրագույն դպրոցի աշխատողների խորհրդակցություն հրավիրեց: Բանասիրական ֆակուլտետի դեկան Իլյա Աբուլաձեն մասնակցում էր խորհրդակցությանը և փաստարկված ու արդարացի ելույթ ունեցավ մինչ այդ տիրող վիճակի մասին:

5. 1950 թ. վերջին Իլյա Աբուլաձեն Վրաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ ընտրեցին: Նրա համար տեղ չէր բացված, սակայն էքսպերտային հանձնաժողովում Գիորգի Չուբինաշվիլին առաջադրեց Աբուլաձեի թեկնածությունը, և հանձնաժողովն էլ պաշտպանեց այն: Աբուլաձեն արդեն վրաց և հայ բանասիրության առաջատար մասնագետի, սկզբնաղբյուրների հեղինակավոր հետազոտողի անուն ուներ: Նշանակալի է թեկուզ միայն այն, որ Մաշտոցի անվան Մատենադարանում աշխատելիս հայկական ձեռագրում նա հայտնաբերեց աղվանական այբուբենը ու նաև՝ անդրանիկ տեղեկություն հրապարակեց դրա մասին: Աղվանքի և աղվանական գրչության առեղծվածը մեծ նշանակության պրոբլեմ է և նրա քննության ժամանակ Աբուլաձեի ծառայությունը այնքան ավելի ակներև կդառնա, որքան ավելի ուշադրություն կդարձվի առեղծվածին:

6. Հայ-վրացական բանասիրության մակարդակը նիկողայոս Մառի փայլուն ուսումնասիրություններից հետո այնպես բարձր չէր եղել, ինչպես եղավ Իլյա Աբուլաձեի աշխատությունների շնորհիվ:

«Հին վրացերենի բառարանը», թեկուզ այն տեսքով, որ ունի Ձեռագրերի ինստիտուտի հրատարակությամբ, մի տեսակ ամփոփումն է բանասիրական աշխատանքի, որ Աբուլաձեի կենաց գործն էր: Այս բառարանը անգնահատելի գանձ կմնա հին վրացերենի գծով կատարելիք աշխատանքների համար:

7. Իլյա Աբուլաձեի անվան հետ է կապված Վրաստանի գիտությունների ակադեմիայի համակարգում Ձեռագրերի ինստիտուտի ստեղծումը: Ինստիտուտի հիմնադրմամբ ապահովվեց ձեռագրերի պահպանությունը և դրանով իսկ հաշտելի նշանակության գործ կատարվեց, հիրավի մեծ գործ, որը միշտ կապված կմնա Աբուլաձեի անվան հետ:

8. Ձեռագրերի ինստիտուտը ոչ միայն պահում-պահպանում է ձեռագրերը, այլ նաև նկարագրում ու հետազոտում է դրանք: Գործի համար կադրեր են հարկավոր, դրանք գտնել ու աճեցնել է պետք: Կադրեր պատրաստելը դյուրին է՝ եթե ձևականորեն մոտենանք, սակայն բարդ է ու դժվար՝ եթե ուզում ենք առաջնորդ ուժ ավելացնել: Իլյա Աբուլաձեն ճիշտ այսպիսի կադրեր էր պատրաստում: Մասնավորապես՝ նա ինստիտուտում ամուր հիմքերի վրա դրեց հին հունարենի և գրաբարի (ինչպես նաև արևելյան լեզուների) ուսումնասիրությունը: Աբուլաձեն երիտասարդ մասնագետներին ներարկում էր սիստեմատիկ աշխատանքի սովորություն, որ ամենևին էլ դյուրին չէր: Մեծապես գնահատելի է այն հետևողականությունն ու հաստատակամությունը, որ Աբուլաձեն դրսևորում էր նման դեպքերում: Եվ եթե այսօր մեր ակադեմիայի հումանիտար ինստիտուտների շարքում Ձեռագրերի ինստիտուտը առանձնանում է սիստեմատիկ հետազոտական աշխատանքով ու այդ աշխատանքի արդյունքներով, դրա համար շնորհապարտ պիտի լինենք Աբուլաձեին և նրանց, ովքեր շարունակում են Իլյա Աբուլաձեի ավանդները: